ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

*Երևան, 29 հունիսի 2001թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ջերմորեն շնորհավորում եմ Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադիրներին, ղեկավարներին, դասախոսներին, ուսանողներին և շրջանավարտներին համալսարանի հիմնադրման 10-րդ փարեդարձի կապակցությամբ:

Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրումը օրինաչափորեն համընկավ Հայաստանի անկախության վերականգնմանը: Խորհրդանշական է, որ համալսարանն իր 10-ամյա հոբելյանը նշում է Հայաստանի Հանրապետության անկախության հոբելյանական փարում: Մեր նորանկախ երկրի և հատկապես նրա երիտասարդության համար համալսարանը եղավ նոր սկիզբ: Ժողովրդավարության արևմտյան չափանիշների, շուկայական տնտեսության, ուսուցման արդիական սկզբունքների և ընդհանրապես նոր մտածողություն սերմանելու առումով համալսարանը եղավ առաջին նմանօրինակ կրթօջախը ոչ միայն Հայաստանում, այլև ողջ տարածաշրջանում:

Հայաստանի ամերիկյան համալսարանը նաև ամերիկյան հաստատությունների, ամերիկահայ համայնքի և Հայաստանի իշխանությունների արդյունավետ համագործակցության հրաշալի օրինակ է: Նրա տասնամյա շնորհակալ գործունեությունը լավագույնս վկայում է համատեղ ջանքերով լուրջ արդյունքների հասնելու նոր հնարավորությունների և չսպառված մեծ ներուժի մասին:

Անցած տասնամյակի ընթացքում համալսարանը գնահատելի ջանասիրությամբ ընդլայնել ու զարգացրել է իր ծրագրերը Հայաստանի զարգացմանը և նորացող պահանջներին համաքայլ: Պատահական չէ, որ նրա բազմաթիվ շրջանավարտներ այսօր ընդգրկված են և՛ պետական ծառայության մեջ, և՛ միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում, և՛ տնտեսության ու կրթության ամենատարբեր ոլորտներում:

Երախտագիտության խոսք հղելով բոլոր նրանց, ովքեր կանգնած են Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրման ակունքներում և ովքեր արժանի շարունակողներն են կարևոր գործի՝ մաղթում եմ անձնական երջանկություն և աշխատանքային նորանոր հաջողություններ:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ